35

ԿԱՐԾԻՔ

Ադելինա Արմենի Սարգսյանի՝ «Գործում զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ, ԺԲ. 00. 05 (Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության վերաբերյալ

Քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի համաձայն հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության: Համաձայն բազմաթիվ հետազոտողների հանցագործության կանխման առավել արդյունավետ միջոցը ոչ թե պատժի խստությունն է, այլ դրա անխուսափելիությունը: Այս ամենով հանդերձ հարկ է նկատել, որ բազմաթիվ երկրների քրեական օրենսգրքեր պատասխանատվության անխուսափելիության հետ միասին ամրագրում են քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ինստիտուտ, նշելով այն հնարավոր հիմքերն ու պայմանները, որոնց առկայության դեպքում միայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

Քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, չնայած առաջին հայացքից կարծեք թե խնդիրներ ունի և հակասության մեջ է մտնում պատժի և պատասխանատվության անխուսափելիության հետ, սակայն դա միայն առաջին հայացքից, որքանով որ գործնականում միշտ չէ, որ նպատակահարմար է հանցանք կատարած անձին ենթարկել քրեական պատասխանատվության և պատժի՝ ելնելով նրա կողմից կատարած հանրորեն վտանգավոր արարքի բնույթից, ծանրության աստիճանից, անձի դրսևորած վարքագծից, նրան բնութագրող հանգամանքներից և այլն: Դրա հետ մեկտեղ պետք է նկատել, որ տարբեր երկրների քրեական օրենսգրքերը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում են քրեական օրենսդրության այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ արդարության, պատասխանատվության անհատականացման, մարդասիրության սկզբունքները, որոնց դրսևորման եղանակներից են հանդիսանում քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման և այլ դեպքերում:

Ի տարբերություն արդարացման և այլ հիմքերով քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների, որի դեպքում քրեական պատասխանատվության հարց չի կարող առաջանալ, Քրեական պատասխանատվությունից

ազատելը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ անձի արարքը պարունակում է կոնկրետ հանցագործության բոլոր հատկանիշները և առկա են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու բոլոր նախադրյալները: Հետևաբար, քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը պետք է դիտել որպես պետության քրեական քաղաքականության կարևորագույն մաս, իսկ գործուն զղջալը՝ որպես քրեական քաղաքականության կարևորագույն մասի բաղադրիչ, որը Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության է ենթարկվել ներկայացված ատենախոսության մակարդակով:

Ինչպես նկատեցինք, արդի ժամանակաշրջանի բազմաթիվ պետությունների օրենսդրությունների կոնկրետ չափորոշիչներից են դրանց համապատասխանեցումը մարդասիրության սկզբունքի պահանջներին, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներից բխող բազմաթիվ միջազգային պայմանագրերին:

Պետությունների քրեական օրենսդրությունները մարդասիրության սկզբունքի պահանջների իրացումը կատարել են տարբեր եղանակներով, այդ թվում՝ գործուն զղջալու, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մեղադրողի և մեղադրյալի միջև գործարքի կնքման, հաշտության (մեդիացիայի), վերականգնողական արդարադատության և այլ ինստիտուտների ներդրման միջոցով: Ընդ որում այդ ինստիտուտները համարվում են հեռանկարային մի կողմից՝ անձի հետագա հանցավոր գործունեության կանխարգելման, մյուս կողմից՝ հանցագործություններից տուժած անձանց իրավունքների, մասնավորապես՝ նյութական վնասի վերականգնման ապահովման առումով, ինչպես նաև կատարած արարքի համար զղջալու պայմանով: Փաստորեն, հետազոտության թեմայի այժմեականությունը ունի իր հաստատուն հիմնավորումը ինչպես տեսական, այնպես էլ գործնական կիրառական առումով:

Հեղինակի կողմից հետազոտության նպատակ է սահմանվել արդարության և մարդասիրության սկզբունքի իրագործման համատեքստում, գործուն զղջալու ինստիտուտի տեսական կիրառական համալիր վերլուծությունը, գործուն զջալու մասին խրախուսական նորմեր կիրառման հետ կապված օրենսդրական բացերի և խնդիրների բացահայտումը, դրանց արդյունքում այդ ոլորտում օրենդրության կիրառմանն ու կատարելագործմանն ուղղված գիտականորեն հիմնավոր առաջարկությունների մշակումն ու ներկայացումը:

Նպատակի իրականացման համար առաջ է քաշվել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ գործուն զղջալու սոցիալ-իրավական էության որոշման, գործուն զղջալու պայմանների իրավական կանոնակարգման և իրավական պրակտիկայում դրանց

առանձնահատկությունների, ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերի հատուկ մասում ամրագրված գործուն զղջման հատուկ տեսակների նորմերով սահմանված իրավական բնույթի և օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունների բացահայտման, խրախուսական նորմերի կիրառման հիմնական խնդիրների բացահայտման և օրենսդրական առաջարկությունների վերաբերյալ:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակին հաջողվել է իրագործել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները և հանգամանալի կերպով հետազոտության ենթարկել գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի վերաբերյալ բազմաթիվ հիմնահարցեր:

Ուսումնասիրելով և վեր հանելով գործուն զղջալու գործընթացը կարգավորող նորմերի գոյություն ունեցող տեսական բազան, համադրելով այն նշված հարաբերությունները կարգավորող նորմերի գործնական կիրառության հետ, արդյունքում ներկայացվել են մի շարք տեսական եզրահանգումներ և օրենսդրական առաջարկություններ: Մասնավորապես՝ գործուն զղջալու ինստիտուտի առավել արդյունավետ կիրառման նպատակով կատարված հետազոտությունների արդյունքում հեղինակի կողմից առաջ է քաշվել գործուն զղջալու ինստիտուտի նոր, հեղինակային սահմանում: Նախ՝ հեղինակն որոշակի մեկնաբանմամբ փորձել և առաջարկել է §գործուն զղջալ! բառակապակցությունը փոխարինել կատարված հանցագործության մասին §գործուն հաղորդում ներկայացնելու! բառակապակցությամբ, ինչպես նաև հոդվածի նկարագրական դիսպոզիցիայում որպես պարտադիր հատկանիշ ամրագրել նաև մեղքի ընդունումը՝ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր պայման: Որպես նորույթ հեղինակի կողմից առաջարկվել է նաև գործուն հաղորդման հիմքով քրեական պատասխանատվությունից պայմանականորեն ազատման ինստիտուտ՝ պայմանավորված հանցավորի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը վերականգնելու հնարավորության բացակայության դեպքում դատարանի կողմից վնասի հատուցման փորձաշրջանային ժամկետ նշանակելու, իսկ այդ ժամկետում հանցավորի կողմից վնասի հատուցման հետ կապված պարտավորությունները չկատարելու դեպքում՝ դատարանի կողմից փորձաշրջանի մասով կայացրած որոշումը վերացնելու և գործը ընդհանուր հիմունքներով դատաքննության նշանակելու մասին:

Հեղինակի կողմից կատարվել են նաև որոշակի գիտական արժեք և հետաքրքրություն ներկայացնող այլ առաջարկություններ, կապված ինչպես գործուն զղջալու ինստիտուտի ընդհանուր բովանդակային դրույթների, այնպես էլ քրեական օրենսգրքի հատուկ մասում

առկա համապատասխան խրախուսական նորմերի բնութագրի, կիրարկման խնդիրների հետ: Մասնավորապես՝ հեղինակի կողմից առաջարկվել է գործուն զղջալու մասին նոր խրախուսական նորմեր, ինչպես նաև գործող խրախուսական նորմերի նոր խմբագրություններ:

Հիշատակման արժանի է նաև ապօրինի կերպով ձեռք բերված և պահած զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, կամ պայթուցիկ սարքերի, ինչպես նաև ապօրինի կերպով ձեռք բերած, պահած թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութերի կամովին հանձնելու հատկանիշների բացահայտումը, այդ հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու նորմերի գիտական վերլուծությունը և արդյունքում արված հետևությունները և առաջարկությունները: Հարցի կարևորությունը պայմանավորում եմ ոչ միայն նրա գործնականում ամենօրյա կիրառման բազմաթիվ փաստերով, այլև հարցի վերաբերյալ տարբեր կարծիքների առկայության և միասնական դատական պրակտիկայի բացակայության պատճառով:

Ատենախոսությունը ունի հարուստ իրավական և փորձառական հիմք: Հետազոտությունը կատարելիս հեղինակը հիմնվել է ՀՀ քրեական օրենսգրքի, առանձին պետությունների քրեական օրենսդրությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, վերաբերելի միջազգային փաստաթղթերի, տեսական աղբյուրների, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի համակարգային ուսումնասիրության վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են յոթ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում վերլուծության է ենթարկվել գործուն զղջալու ինստիտուտի սոցիալ-իրավական բնույթը և նշանակությունը, հասկացությունը, հատկանիշները, ինչպես նաև տարբեր երկրների քրեական օրենսդրություններով ամրագրված կարգավորումները, նրանց իրավահամեմատական վերլուծությունը:

Երկրորդ գլխում վերլուծվել է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակները, այդ թվում՝ ընդհանուր և հատուկ տեսակների հարաբերակցությունը, օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածներով ամրագրված խրախուսական քրեաիրավական նորմերը և դրանցում ծագող խնդիրները:

Երրորդ գլխում վերլուծվել է գործուն զղջալու ինստիտուտի կիրառականությունը տնտեսական գործունեության վերաբերյալ քրեական գործերով և օրենսդրության կատարելագործմանը և կիրառման արդյունավետության բարձրացմանը վերաբերող խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները և չի հակասում դրանց:

Այս ամենով հանդերձ, ներկայացված թեկնածուական աշխատանքում առկա են որոշ վիճարկելի դիրքորոշումներ ու դրույթներ, որոնք ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Այսպես

.

Պաշտպանության ներկայացված 3-րդ դրույթում տեղ է գտել այն ձևակերպումը, որ «գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հանդիսանում է իրավակիրառի իրավունքը և ոչ թե պարտականությունը» /տե՛ս էջ 7/: Մինչդեռ քրեական պատասխանատվությունից ազատելը երկընտրելի բնույթ է կրում, որքանով որ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներում նախատեսված դեպքերում պատասխանատվությունից ազատելը կրում է ոչ թե հայեցողական, այլ պարտադիր բնույթ: Նման պայմաններում բավարար չափով չի պատճառաբանվել գործուն զղջալու ինստիտուտի կիրառման դեպքում պատասխանատվունից ազատման երկընտրելի բնույթը և այդ համատեքստում նաև չի ներկայացվել, թե ինչով է պայմանավորված և գիտականորեն հիմնավորված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններով պատասխանատվությունից ազատման հայեցողական բնույթը, իսկ այլ՝ ծանր և առանձնապես ծանր տեսակների հանցագործությունների դեպքում՝ պատասխանատվությունից ազատման պարտադիր բնույթը:

Հաջորդ նկատառումը կայանում է նրանում, որ պաշտպանության ներկայացված ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված է, որ գործուն զղջալու հիմքով պատասխանատվությունից կարող է ազատվել առաջին անգամ հանցանք կատարած անձը: Մինչդեռ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված է, որ «տվյալ հիմքով անձը չի կարող կրկին անգամ ազատվել քրեական պատասխանատվությունից»: Հստակեցված չէ, թե նշված ձևակերպումները նույն իմաստն են կրում, թե ոչ: Արդյոք, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի նշանակում, որ գործուն զղջալու հիմքով անձը պատասխանատվությունից կարող է ազատվել ընդամենը մեկ անգամ: Եվ եթե դա այդպես է, ինչպես օրինակ ամրագրված է պաշտպանության ներկայացված 8-րդ

դրույթում, ապա արդյո՞ք այն գիտականորեն հիմնավորված է և կիրառելի է բոլոր դեպքերում: Այդ դեպքում ինչպես պետք է գնահատել ապօրինի ձեռք բերած զենքը կամովին հանձնելու հիմքով պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին անգամ ապօրինի ձեռք բերած կամ գտած զենքի կամովին հանձնելու դեպքում և այլն:

Առավել ևս, որ քրեական օրենսգրքի նախագծի 82-րդ հոդվածի բովանդակությունից պարզ է դառնում, որ անձը չի կարող նույն հիմքով պատասխանատվությունից ազատվել երկրորդ անգամ:

Հեղինակի կողմից ներկայացված նախագծում ամրագրված է, որ գործուն հաղորդման դեպքում պատասխանատվությունից կարող է ազատվել առաջին անգամ հանցանք կատարած անձը: Այդ համատեքստում հստակեցման կարիք ունի այն հարցը, թե «առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելը» ձևակերպման մեջ «առաջին անգամ»-ը վերաբերում է ընդհանրապես հանցանք կատարելուն, թե առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելուն:

Հեղինակի կողմից կարծիք է հայտնվել նաև այն մասին, որ գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար պարտադիր չէ օրենքում ամրագրված բոլոր պայմանների ապահովումը և որ այդ հատկանիշների ամբողջությունը նեղացնում է գործուն զղջալու կիրարկման շրջանակները և չի համապատասխանում նրա նպատակին: Կարծում ենք, որ այս մոտեցումը նյութական հանցակազմերով հանցագործության դեպքում վիճահարույց է և նման մասնակի զղջումները կարելի է դիտարկել ոչ թե ընդհանրապես պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ ընդամենը պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Ինչ արժե օրինակ տուժողի համար գողություն կատարող անձի կողմից մեղայականով ներկայանալն ու գործուն զղջալը առանց նյութական վնասի վերականգնման: Այսինքն գործուն զղջալու ձևակերպման մեջ **շեշտադրումը** պետք անել առաջին (գործուն) բառի վրա, որքանով որ առաջնային նշանակությունը այստեղ պատկանում է անձի օբյեկտիվորեն դրսևորած արարքին, հանցավորի ակտիվ դրական վարքագծին, այլ ոչ թե կատարվածի սուբյեկտիվ վերաբերմունքին: Պետք է նկատի ունենալ նաև, որ գործնականում մեղքի ընդունումը և զղջումը կարող է լինել ձևական՝ ունենալով միայն զուտ պատասխանատվությունից և պատժից ազատվելու նպատակ: Բացի այդ՝ հայտնի է, որ մեղքի ընդունումը դեռևս չի նշանակում կատարված հանցագործության համար զղջում:

Հաջորդ վիճահարույց խնդիրը վերաբերում է ապօրինի կերպով ձեռք բերած, պահած զենքի կամովին հանձնման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատման

հարցին: Համաձայն գործող օրենսդրության նման դեպքերում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Հոդվածի նման ձևակերպումից հետևում է, որ եթե անձի գործողություններում առկա է այլ հանցակազմ, ապա այն սահմանափակում և արգելք է հանդիսանում զենքի և այլ առարկաների հանձնման դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն: Մինչդեռ ատենախոսի կարծիքով տվյալ սահմանափակումը նպատակահարմար չէ և տվյալ դեպքում անձը զենքի կամ նշված այլ առարկաների կամովին հանձնելու դեպքում, այդ մասով, ենթակա է քրեական պատասխանատվությունից ազատման: Միաժամանակ, ատենախոսի կողմից առաջարկվում է նաև, որ այն դեպքերում, երբ անձը մինչև զենքի կամովին հանձնելը այդ նույն զենքով կատարել է այլ հանցագործություն, ապա վերջինս չի ազատվում պատասխանտվությունից:

Ինչպես նկատում ենք հանցագործության բազմակիության, տվյալ դեպքում հանցագործությունների իրական համակցության մի դեպքում ապօրինի պահած զենքի կամովին հանձնումը անձին ազատում է քրեական պատասխանատվությունից, մյուս դեպքում՝ ոչ: Կարծում եմ տվյալ դեպքում կարիք կա ներկայացված դրույթների ավելի հիմնավոր, գիտական և համոզիչ ներակայացման, հիմքում ունենալով այն կարևոր դրույթը, որ բոլոր դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելը չպետք է հակասի քրեական օրենսդրության խնդիրներին: Ընդհանրապես խրախուսական նորմերի կարևորությունը կասկած չի հարուցում, սակայն պետք է նկատի ունենալ, որ մարդասիրությունը չի կարող դրսևորվել միայն հանցանք կատարած անձի նկատամբ, այլ այն հավասարապես պետք է դրսևորվի նաև հասարակության նկատամամբ և որ այս երկուսը պետք է անպայման հակակշռեն միմյանց, որը և պետք է լինի խրախուսական նորմերի վերաբերյալ արված առաջարկությունների, հետևությունների, օրենսդրական նախաձեռնությունների և ընդունվող օրենքների հիմքում:

Պատահական չէ, որ ՀՀ դատական բարձրագույն ատյանը կոնկրետ գործերով բազմիցս անդրադարձել է նաև արդարության և մարդասիրության սկզբունքների գործնական կիրառությանը և դրանց վերաբերյալ տվել արժեքավոր և հիմնարար պարզաբանումներ:

Հարկ է կրկին փաստել, որ ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, այդպիսիք չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Գտնում եմ, որ գրախոսվող աշխատանքն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական, ավարտուն հետազոտություն, որում հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրներն ու կատարված հետազոտության արդյունքում ներկայացնել ինքնուրույն

առաջարկություններ, որի մասին են վկայում պաշտպանության ներկայացվող դրույթներում և աշխատանքի եզրափակիչ մասում շարադրված հետևությունները: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսի կողմից մշակվել և ներկայացվել են համապատասխան օրենսդրական առաջարկություններ, որոնք կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործման նպատակով:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական աշխատանքներին ներկայացվող չափորոշիչներին, հետազոտության արդյունքում կատարված եզրահանգումները գիտականորեն հիմնավորված են ու տրամաբանորեն փաստարկված:

Գտնում եմ, որ Ադելինա Արմենի Սարգսյանի՝ «Գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները /իրավահամեմատական վերլուծություն/» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջին պաշտպանական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր՝ **Ա.Ա. Թամազյան**

Իրավաբանական գիտությունների դոկտոր
Ա. Ա. Թամազյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական քարտուղար՝ **Ռ.Ս. Կասաբարովա**